ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«25» մարտի 2025 թ. N 29-Ա/Լ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՕՐԹՈՊԵԴԻԿ ԿՈՇԻԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի N 104-Ա/1 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ պետական հավաստագրի հիման վրա օրթոպեդիկ կոշիկի տրամադրման ցուցումների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետին՝ ապահովել սույն հրամանի տրամադրումը Առողջապահության նախարարությանը, մարզպետների աշխատակազմեր և Երևանի քաղաքապետարան:

3. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ սույն հրամանը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:

4. Միասնական սոցիալական ծառայության պետին՝ ապահովել սույն հրամանի հավելվածով հաստատված մեթոդական ուղեցույցի կիրառումը անձի ֆունկցիոնալության գնահատման հանձնաժողովների կողմից հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների անհատական ծրագիրը կազմելու ընթացքում:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2023 թվականի հուլիսի 12-ի «Պետական հավաստագրի հիման վրա օրթոպեդիկ կոշիկի տրամադրման ցուցումների վերաբերյալ մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N 104-Ա/1 հրամանը:

3/25/2025

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
Աշխատանքի և սոցիալական հարցրեի նախարարի
2025թ. մարտի 25-ի N 29-Ա/Լ հրամանի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՕՐԹՈՊԵԴԻԿ ԿՈՇԻԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Օրթոպեդիկ կոշիկը հատուկ ձևի և կառուցվածքի կոշիկ է, որը նախատեսված է այն անձանց համար, որոնք ունեն ոտնաթաթի կառուցվածքային խնդիրներ և/կամ քայլքի ֆունկցիայի խանգարում: Օրթոպեդիկ կոշիկները ցուցված են այդ խնդիրների հետևանքով առաջացած քայլքի կորսված կամ նվազած ֆունկցիան վերականգնելու, ոտնաթաթերին ճիշտ դիրք տալու, ինչպես նաև ոտնաթաթերի կառուցվածքային շեղումների հետևանքով առաջացած խնդիրների ծանրացումը կանխարգելելու համար:

2. Օրթոպեդիկ կոշիկները պետական հավաստագրերի հիման վրա տրամադրվում են համաձայն սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված ցուցումների:

3. Օրթոպեդիկ կոշիկները տրամադրման ցուցումներն են՝

1) Ոտնաթաթի կառուցվածքային խանգարումներ.

ա. մատների դեֆորմացիաներ՝ մուրճանման մատներ, կծկված մատներ, ոսկրային գերաճներ, կրնկային խթան, հալլուքս վալգուս, հալլուքս վառուս,

բ. էկվինովարուսային թաթ կամ ծուռթաթություն,

գ. փղախտ, ակրոմեգալիա,

դ. ոտնաթաթը դեֆորմացնող սպիներ կամ ոտնաթաթի բազմակի սպիներ,

ե. կրնկաթաթ, սնամեջ՝ էկվինոսային (ձիու) թաթ, խոռոչավոր ոտնաթաթ,

զ. ոտնաթաթի բացարձակ կամ հարաբերական կարճացում,

է. վալգուսային (պրոնացիոն) կամ վարուսային (սուպինացիոն) թաթ.

2) Սրունք թաթային հոդի անկիլոզ կամ արթրոդեզ.

3) Դիաբետիկ ոտնաթաթի համախտանիշ.

4) Ստորին վերջույթի կարճացում 30մմ և ավելի.

5) Սրունքի կամ ոտնաթաթի մկանների լուծանքային (պարալիտիկ) (ՄՈՒԿ, մկանային ատրոֆիաներ, հետվնասվածքային նեյրոպաթիաներ և այլն) խախտումներ.

6) Ոտնաթաթի առաջային հատվածի անդամահատումներ:

4. Պետական հավաստագրով օրթոպեդիկ կոշիկներ չեն տրամադրվում հետևյալ դեպքերում.

1) ոտնաթաթի տարածուն տրոֆիկ փոփոխություններ.

2) ոտնաթաթի փափուկ հյուսվածքների տարածուն թարախային պրոցեսներ.

3) օրթոպեդիկ միջոցի հումքի հանդեպ ալերգիա: